

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, սեպտեմբերի 27, 2006թ.

Մամուլի համար հաղորդագրություն

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն, այս տարի եւս մասնակցել է «2006-2007թ.թ. Մրցունակության համաշխարհային զեկույցի» (ՄՀԶ) պատրաստմանը, որտեղ Հայաստանը ներկայացվեց երկրորդ անգամ:

ՄՀԶ-ն աշխարհում լայնորեն ճանաչված եւ մեծ հեղինակություն վայելող վերլուծական ուսումնասիրություն է, որտեղ համեմատվում են տարբեր երկրների տնտեսական մրցունակությունը եւ դրանց տնտեսական աճի վրա ներազդող գործոնները: Առաջին անգամ 1979թ. հրապարակված այս զեկույցը այսօր արդեն ներկայացնում է 125 զարգացած եւ զարգացող երկրների տնտեսության մրցունակության վերլուծությունը:

ՄՀԶ-ի կարեւորագույն բաղադրիչներից է ընկերությունների ղեկավարների շրջանում անցկացվող հարցումը, որը հնարավորություն է տալիս տարեկան կտրվածքով դիտարկել տվյալ երկրի տնտեսական միջավայրը եւ գնահատել կայուն աճի ձգտելու դրա ներուժը:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը 2006թ. փետրվար-ապրիլ ամիսներին Հայաստանի՝ նախապես ընտրված եւ տնտեսության տարբեր ոլորտներն ու հատվածները ներկայացնող շուրջ 95 ընկերությունների, կազմակերպությունների ղեկավարների շրջանում անցկացրել է հարցում՝ ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի պատրաստած եւ հետազոտական կենտրոնի կողմից Հայաստանի համար տեղայնացված հարցաշարի:

Արդյունքները

Ըստ Ձեկույցի՝ ամենամրցունակ երկրներն են Շվեյցարիան, Ֆինլանդիան եւ Շվեդիան: Դանիան, Սինգապուրը, ԱՄՆ, Ճապոնիան, Գերմանիան, Նիդեռլանդները եւ Մեծ Բրիտանիան եզրափակում են առաջին տասնյակը: ԱՄՆ-ը այս տարի ցույց է տվել էական անկում՝ առաջին տեղից տեղափոխվելով վեցերորդ տեղ՝ ըստ Մրցունակության համաշխարհային ինդեքսի տվյալների:

«Շվեյցարիայի եւ սկանդինավյան երկրների կողմից առաջատար դիրքերի գրավումը պայմանավորված է հանրային եւ բիզնես ինստիտուտների որակով, մակրոտնտեսական միջավայրով, կրթական համակարգի ձեռքբերումներով, այդ երկրների ընկերությունների նոր տեխնոլոգիաների յուրացմամբ եւ կիրառմամբ, ինչպես նաեւ նրանց նորարարական ուղղվածությամբ», նշում է Ավգուստո Լոպես Քլարոսը՝ ՀՏՖ-ի Համաշխարհային մրցունակության ցանցի տնօրենը:

Վերլուծություններն արվում են պետական վիճակագրական ծառայությունների եւ միջազգային կառույցների հրապարակած տվյալների, ինչպես նաեւ՝ ամեն երկրում ՀՏՖ-ի գործընկեր կազմակերպությունների (առաջատար հետազոտական ինստիտուտներ եւ բիզնես կազմակերպություններ) կողմից ղեկավարների շրջանում անցկացվող հարցման արդյունքների հիման վրա: Այս տարի 125 երկրներից ավելի քան 12,000 ընկերության ղեկավար է մասնակցել հարցմանը: Հարցումը հնարավորություն է տալիս տարեկան կտրվածքով դիտարկել տվյալ երկրի տնտեսական միջավայրը: Տարեկան զեկույցն անդրադառնում է ընդգրկված երկրների մի շարք ուժեղ եւ թույլ կողմերին, ինչն էլ հնարավորություն է ընձեռնում այդ երկրներին՝ վերանայել ընթացիկ քաղաքականությունը կամ գնալ նոր բարեփոխումների:

Ձեկույցում Հարվարդի բիզնես դպրոցի պրոֆեսոր Մայքլ Պորտերը ներկայացնում է Բիզնեսի մրցունակության ինդեքսի արդյունքները, ինչը հավելում է Մրցունակության համաշխարհային

ինդեքսը: Այս ցուցանիշն արտացոլում է ընկերությունների ընդհանուր գործունեությունը եւ ռազմավարությունը, ինչպես նաեւ՝ երկրի միկրոտնտեսական բիզնես միջավայրի որակը, որոնք նպաստում են այդ ընկերությունների եւ երկրների արդյունավետության եւ արտադրողականության աճին: Ըստ այս ցուցանիշի՝ աշխարհի առաջին եռյակը գլխավորում է ԱՄՆ-ը, որին հետեւում են Գերմանիան եւ Ֆինլանդիան: Շվեյցարիան, Դանիան, Նիդեռլանդները, Շվեդիան, Միացյալ Թագավորությունը, ճապոնիան եւ Յուն Կոնգը եզրափակում են տասնյակը:

Հայաստանի արդյունքները

Ըստ Մրցունակության համաշխարհային ինդեքսի՝ Հայաստանը զբաղեցրել է 82-րդ տեղը աշխարհում (նախորդ տարի՝ 81-րդ տեղը): Նախորդ տարվա համեմատ ստանալով միջինում նույն գնահատականը՝ 3.75 միավոր, Հայաստանն այս տարի տեղափոխվել է երկրների առաջին 69-տոկոսային միջակայքից 65-տոկոսային միջակայք՝ փոքր ինչ բարելավելով իր դիրքը: Սա մասամբ պայմանավորված է նրանով, որ այս տարի Ձեկույցի մեջ ներառվել են նոր երկրներ, որոնք հիմնականում ավելի ցածր վարկանիշ են ստացել: Հայաստանը համեմատաբար լավ արդյունքներ ունի մակրոտնտեսական եւ առողջության ու բազային կրթության ցուցանիշներում եւ մտահոգիչ արդյունքներ՝ ապրանքային շուկաների արդյունավետության, ֆինանսական շուկաների զարգացման, գործարարության զարգացման եւ կառավարման մակարդակի, ինչպես նաեւ՝ ինստիտուտների բնագավառներում:

Ըստ Բիզնեսի մրցունակության ինդեքսի՝ Հայաստանը զբաղեցրել է 94-րդ տեղը (անցյալ տարի՝ 87-րդ տեղը): Հայաստանը համեմատաբար բարձր ցուցանիշ ունի նորարարության համար անհրաժեշտ կարողությունների տեսակետից: Գործարարության մրցունակության բարձրացման տեսակետից հասցեագրվելիք լուրջ խնդիրներ են համարվում ֆինանսական շուկաների զարգացածության մակարդակը, տեղական մրցակցության դաշտի անկատարություններն ու մրցակցության աստիճանը, գիտահետազոտական ու փորձարարական նախագծման բնագավառում արվող ներդրումների քանակը, վարչական ենթակառուցվածքների զարգացածության մակարդակը, ինչպես նաեւ՝ զարգացած քլաստերների բացակայությունը:

Ինչպես նախորդ տարվա, այնպես էլ այս տարվա ցուցանիշներից կատարվելիք հիմնական հետեւությունն այն է, որ, Հայաստանի մրցունակության ուժեղացման տեսակետից, զարգացման ներկա փուլում, երբ առկա է մակրոտնտեսական համեմատաբար բարվոք միջավայր, ավելի ու ավելի կենսական նշանակություն է ստանում գործարար միջավայրում ու ընկերությունների մակարդակում լուրջ բարեփոխումների իրականացումը: Մրցունակության ուժեղացման տեսակետից՝ միջին ժամկետում սա է Հայաստանի առջեւ կանգնած հիմնական մարտահրավերը:

Ձեկույցում Հայաստանի արդյունքներին վերաբերող նյութերը տեղադրված են www.ev.am կայքէջում:

Հայաստանի մրցունակության զեկույց

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը նախաձեռնել է Հայաստանի մրցունակության զեկույցի պատրաստումը, որն առաջին անգամ համապարփակ կներկայացնի Հայաստանի տնտեսության մրցունակությունը, կբացահայտի այդ ոլորտի հիմնական մարտահրավերները, կհատկորոշի դրանց միջնաժամկետ եւ երկարաժամկետ ազդեցությունը երկրի զարգացման վրա, ինչպես նաեւ՝ կլուսաբանի այն կարելու լծակները, որոնք կօժանդակեն Հայաստանի մրցակցային դիրքի բարելավմանը: Ձեկույցը նախատեսվում է հրատարակել 2007թ. փետրվարին: